ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գարանտիա-Շեն ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/33 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Աթոռ հանդիսությունների դահլիճի համար՝ աթոռի արտաքին չափսերն են՝ (560-600)x(571-600)x(876-900)մմ(LxԽxԲ), նստելատեղն՝ առնվազն 500x500մմ(LxԽ) չափսի, բարձրությունը հատակից՝ (460-480)մմ: Աթոռն օգտագործողի առավելագույն քաշը՝ մինչև 130կգ: Դահլիճի աթոռի կմաղքը պետք է լինի մետաղական և փոշեներկված սև գույնի բարձրակարգ ներկանյութով: Թիկնակը և նստելատեղը պետք է պատրաստված լինեն 10-14մմ հաստության նրբատախտակից, վրան կպած լինի 50-70մմ հաստության, 25կգ/մ3 խտությամբ սպունգ և երեսպատված լինի կահույքի համար նախատեսված որակյալ, հաստ, մուգ գույնի պաստառի ամուր կտորով, պաստառի կտորի գույնը պետք է համաձայնեցնել դպրոցի տնօրինության հետ: Նստելատեղը (նստատեղը) պետք է լինի ծալվող, ինչպես ցույց է տրված նմուշի նկարում և կարգավորվի կահույքագործության մեջ օգտագործվող անձայն, սահուն ծալվող, հատուկ նախատեսված մեխանիզմով: Բացված վիճակում նստելատեղի (նստատեղ) և թիկնակի հարթությունների կազմած անկյունը պետք է լինի 1050- 1100: Թիկնակի հետնամասի և նստելատեղի (նստատեղ) տակի պաստառին ամբողջ մակերեսով կարող է ամրացված լինել սև կամ մեկ այլ մուգ գույնի պլաստիկե համապատասխան դետալ, որն պարտադիր չէ: Ձեռքի հենակները լայնքը առնվազն 50մմ, պետք է պատրաստված լինեն փայտե/ մետաղական լավ հղկված, մշակված, ողորկ, եզրերը կլորացված, եռակի լաքապատված/ բարձրակարգ ներկանյութով փոշեներկված որակյալ դետալից, և նրանց վրա կարող է կպած լինի առնվազն 10-14մմ հաստության և 15կգ/մ3 խտության սպունգ ու պաստառապատված հաստ, որակյալ և ամուր կտորով: Աթոռի ոտքերը պետք է լինեն երկաթյա և փոշեներկված բարձրակարգ սև գույնի ներկանյութով,

	հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից ամբողջ մակերեսով պետք է ամրացված լինի պլաստիկե մուգ գույնի դետալներ, որոնց պատերի հաստությունը՝ առնվազն 8մմ: Բոլոր միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Աթոռների հավաքածուի մեջ պետք է լինեն հատակին, անհրաժեշտության դեպքում նաև իրար հեշտությամբ ու ամուր ամրացնելու համար անհրաժեշտ բոլոր դետալները: Ձեռքի հենակների կողքում ծալված վիճակում կարող է լինել հավելյալ պլաստմասե դետալ, որն աթոռին նստած մարդու առջևում բացվող պլաստմասե հավելյալ սեղանիկ է և այն պարտադիր չէ: Դահլիճի աթոռները հատակին ամրացնելու անհրաժեշտությունը, կարգը և ձևը, պետք է համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ, անհրաժեշտության դեպքում՝ ամրացնել հատակին: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության սերտիֆիկատ (որակի հավաստագիր) կամ ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ: Նմուշը /նկարը/ կցվում է: Նշված ապրանքի համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Ապրանքի չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը իրականացվում է Մատակարարի կողմից: Մինչև մատակարարումը ապրանքների նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ծանոթություն. Նմուշ նկարը տրվում է զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չեն կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Гарантия-Шен в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-25/33 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	